

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 16-ի №298Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2012 թվականի ապրիլի 20-ի №ARG-01-14/1607 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2011 թվականի ներդրումային ծրագիրը

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2011 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2011 թվականի ընթացքում իրականացնել **8 491,0¹** մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝


- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ ներդրումներ՝ **519,6** մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ **2 745,1** մլն դրամ
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ **77,5** մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ **681,3** մլն դրամ,

¹ Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ **1 084,3** մլն դրամ,
- ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ **3 000,0** մլն դրամ:
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ **383,1** մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության **2011** թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

ՊԹՁ ԱՅԻ 1



«ՀայԲուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «ՀայԲուսգազարդ» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը **2011** թվականի ընթացքում կատարել է **6 214,7** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել **5 690,1** մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են **888,5** մլն

դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 524,6 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև` աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3	4	5	6	7
1	Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումներ	519,6	6,1%	309,2	5,4%	59,5%
2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	2745,1	32,3%	460,9	8,1%	16,8%
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	77,5	0,9%	79,2	1,4%	102,1%
4	Գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	681,3	8,0%	445,1	7,8%	65,3%
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1084,3	12,8%	912,4	16,0%	84,1%
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	3383,2	39,8%	2594,9	45,6%	76,7%
7	Այլ ներդրումներ			888,5	15,6%	
8	Ընդամենը	8 491,0		5 690,1		67,0%

Ստորև` աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

մլն դրամ

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր	Ընթացիկ ծախսեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	518,7	0,0	518,7
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	1 114,3	361,5	1 475,8
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	255,7	0,0	255,7

4	Մեփական ուժերով կատարված աշխատանքներից	3 437,5	527,0	3 964,4
4,1	աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր	468,8	139,5	608,3
4,2	հումք և նյութեր	2 953,7	361,3	3 315,0
4,3	տեղակայման ենթակա սարքավորումներ	5,9	0,0	5,9
4,4	այլ	9,0	26,2	35,2
5	ԸՆԴԱՄԵՆԸ	5 326,2	888,5	6 214,7

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2011 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 6 214,7 մլն դրամ գումար, որից մոտ 85,7 %-ը հանդիսանում է կապիտալացված և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 14,3%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների 23,75%-ն իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Մեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 63,79%-ը: Ներդրումների 8,35%-ը նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներն են և 4,11%-ի ներդրումներն ուղղվել են տեղակայում չպահանջող հիմնական միջոցների ձեռքբերմանը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2011 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսված ներդրումներ

2011 թվականին Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 519,6 մլն դրամ գումար: Փաստացի ներդրվել է 432,2 մլն դրամի գումար, որի արդյունքում ավարտվել են 309,2 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ներառվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **2 745,1** մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազատարերի շինարարության, գազատարերի բացված հատվածների վերականգնման և ամրացման, գազաբաշխիչ կայանների շինարարության և վերազինման, գազի մաքրման կայանի կառուցման, ինչպես նաև էլեկտրապաշտպանիչ կայանների և գծային փականների տեղադրման ու վերազինման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ներդրումներ կատարել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և կառուցման ուղղությամբ:

Ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է **460,9** մլն դրամի ներդրումներ: Այս ուղղությամբ աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են: Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **1,5** մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **460,9** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **459,4** մլն դրամը:

Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգեր՝ իրենց շանթապաշտպանիչ համակարգերով, արդյունաբերական գազահաշվիչներ, ջերմաստիճանի և ճնշման տվիչների կարգաբեռիչներ՝ իրենց օժանդակ սարքավորումներով, ինչպես նաև նախատեսվում էր իրականացնել միջոցառումներ գազափոխադրման համակարգի կապի բարելավման ուղղությամբ (ընկերության միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում): Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **77,5** մլն դրամ:

Փաստացի ներդրվել է **79,5** մլն դրամի գումար, որի արդյունքում ավարտվել են **79,2** մլն դրամի աշխատանքներ: Մնացած **0,3** մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում **47,8** մլն դրամ արժեքով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

մլն դրամ

Ներդրումների ուղղությունը	Ներդրումային ծրագրով չնախատեսված
Գազափոխադրման համակարգի հաշվառման համակարգի արդիականացում	0,2
Գազափոխադրման համակարգի ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռք բերում	47,6
Ընդամենը	47,8

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **79,2** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **31,4** մլն դրամը:

Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում

Այս նպատակով **2011** թվականին նախատեսվում էր իրականացնել **681,3** մլն դրամի ներդրումներ, որից **250,0** մլն դրամը գազաբաշխման ցանցի ընդլայնման, իսկ **431,3** մլն դրամը նոր բաժանորդների միացման նպատակով: Նախատեսվում էր ավարտել նախկինում սկսված՝ սակայն անավարտ գազատարերի շինարարությունը և գազաբաշխման ցանցին միացնել **15 000** նոր բաժանորդներ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է **561,6** մլն դրամ: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են **57,9** մլն դրամի գազատարերի կառուցման և վերատեղադրման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների համար տեղակայվել են **387,2** մլն դրամի հաշվառման համալիրներ: Մնացած **116,5** մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

2011 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել նոր **18136** բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է **632142**:

Հաշվետվությունում ոչ լիարժեք լրացված լինելու պատճառով գազաբաշխման ցանցի ընդլայնման ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալից **0,3** մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **445,1** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **444,8** մլն դրամը:

Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր իրականացնել գազատարերի վերականգնման և վերատեղադրման, էներգամատակարարման համակարգի արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների տեղակայման և այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **1 084,3** մլն դրամ: Ընկերությունն իրականացրել է **1 151,8** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **912,4** մլն դրամի աշխատանքներ: Մնացած **239,4** մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Նշված ներդրումների ծավալում (**912,4** մլն դրամ) **2,3** մլն դրամ արժեքով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Բացի այդ, **0,7** մլն դրամ արժեքով աշխատանքներ նվազեցվել են ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, իսկ **6,3** մլն դրամ արժեքով աշխատանքներ նվազեցվել են հաշվետվությունում ոչ լիարժեք լրացված լինելու պատճառով (նշված չեն դրանց գոյացման աղբյուրները կամ նշված են մասնակի և այլն) մասնավորապես.

մլն դրամ

Ներդրումների ուղղությունը	Ներդրումային ծրագրով չնախատեսված	Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում	Հաշվետվությունում ոչ լիարժեք լրացված	Ընդամենը
Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում և վերատեղադրում	0,2	0,2	6,3	6,7
Գազաբաշխման համակարգի էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում	2,1	0,5	-	2,6
Ընդամենը	2,3	0,7	6,3	9,3

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **912,4** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **903,1** մլն դրամը:

**Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման
ծառայությունների ոլորտներում ներդրումներ**

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտում ներդրումներ պետք է իրականացվեին հետևյալ ուղղություններով`

- հաշվառման համակարգի արդիականացում,
- գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում,
- Գազաբաշխման համակարգի էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերասարքավորում,
- կարգավարական, վթարա-վերականգնողական ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերում:

2011 թվականին հաշվառման համակարգի արդիականացման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **158,4** մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են **153,3** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **147,0** մլն դրամի աշխատանքներ: Մնացած **6,3** մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում **32,4** մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, որից **3,5** մլն դրամը նախատեսված չէր ներդրումային ծրագրով, **28,3** մլն դրամը գերազանցել են ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը և **0,6** մլն դրամի աշխատանքները նվազեցվել են հաշվետվությունում ոչ լիարժեք լրացված լինելու պատճառով:

Գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **3 121,4** մլն դրամի ներդրումներ, որից **3 000.0** մլն դրամը` սպառողների մոտ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման նպատակով և **121,4** մլն

դրամը համակարգչային տեխնիկայի, տարբեր սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով և այլն: Ընկերությունը **2011** թվականին այս ուղղությամբ իրականացրել է **2 260,9** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ծավալում (**2 260,9** մլն դրամ) **92,0** մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախատեսված չլինելու պատճառով և **2.0** մլն դրամը՝ տվյալ ուղղության համար նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցելու պատճառով:

Այս ուղղությամբ ներդրումային ծրագրով նախատեսված գումարի շրջանակում ընկերությունը ձեռք է բերել **2 142,6** մլն դրամի ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրներ:

Մեքենա-մեխանիզմների ձեռք բերման և վերասարքավորման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **68,1** մլն դրամ: Ընկերությունը **2011** թվականի ընթացքում ներդրել է **84,5** մլն դրամ, որի արդյունքում ձեռք են բերվել **80,6** մլն դրամի մեքենա-մեխանիզմներ և ավարտվել են **3,9** մլն դրամի մեքենաների վերասարքավորման աշխատանքներ: Այս ծավալում (**84,5** մլն դրամ) **21,2** մլն դրամը վարչական ապարատի համար ձեռքբերված մարդատար մեքենաներն են և **0,4** մլն դրամը «Մերսեդես-Բենց **230**» մեքենայի վերասարքավորումն է, որոնց արժեքները նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախատեսված չլինելու պատճառով:

Բացի վերը նշվածը, սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցվել է նաև **0,5** մլն դրամի մեքենաների վերանորոգման ծախսերը, քանի որ նմանատիպ աշխատանքներ արդեն ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում և **1,1** մլն դրամի ավտոմեքենաների վերասարքավորման ծախսերը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

2011 թվականի ներդրումային ծրագրով շենքերի և շինությունների կառուցման, ընդլայնման և ձեռքբերման ուղղությամբ ներդրումներ նախատեսված չէին: Փաստացի իրականացվել են **127,9** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **89,0** մլն դրամի աշխատանքներ:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումներն ողջ ծավալով (**89,0** մլն դրամ) ծավալով նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա

ներդրումների ծավալից, ներդրումային ծրագրով համաձայնեցված չլինելու պատճառով:

Կարգավարական, վթարա-վերականգնողական ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ **2011** թվականին նախատեսվում էր իրականացնել **35,3** մլն դրամի ներդրումներ բարձր զգայունության գազափնտրիչ սարքերի և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են **13,5** մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են: Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում **1,0** մլն դրամ (ձեռք են բերվել գազահաշվիչների ղեկավարման վահանակ՝ **0,7** մլն դրամ և միաֆազ էլեկտրոնային հաշվիչներ **CEM-1՝ 0,3** մլն դրամ ծավալով) ընդհանուր ծավալով աշխատանքներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախատեսված չլինելու պատճառով և **0,7** մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Արդյունքում, գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում իրականացված (ավարտված) ներդրումների ծավալից նվազեցվել են **240,3** մլն դրամի ներդրումներ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է **2 354,5** մլն դրամ:

Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները՝ **888,5** մլն դրամը իրենցից ներկայացնում են գազատարերի և գազահաշվիչների, թվով **1262** ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի, տարբեր սարքերի և սարքավորումների և այլ հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսեր: Նշված ծախսերը սակագնում ներառվող ընթացիկ ծախսեր են, ուստի դրանք ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ամփոփ ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

մլն դրամ

1	2011 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ	6214,7
2	2011 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը	524,6
3	2011 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ	5 690,1
4	Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում`	1 187,7
4.1	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում`	268,9
4.1.1	Գազափոխադրման համակարգի վերակառուցում	1,5
4.1.2	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	47,8
4.1.3	Գազաբաշխման համակարգի ընդլայնում	0,3
4.1.4	Գազաբաշխման համակարգի վերակառուցում	9,3
4.1.5	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	210,0
4.2	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված ներդրումներ	30,3
4.3	Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ	888,5
5	2011 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը	4 502,4